ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 1415-Ա/2 «08» օգոստոսի 2023 թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐՎԱ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ» ՄՐՑՈՒՅԹԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ԵՎ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-Ի № 459-Ա/2 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշման հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 4-րդ և 5-րդ մասերով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել՝

1) «Հայաստանի Հանրապետության տարվա երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի իրականացման կանոնակարգը՝ համաձայն Հավելված № 1-ի,

2) «Հայաստանի Հանրապետության տարվա երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի փորձագիտական գնահատման չափանիշները՝ համաձայն Հավելված № 2-ի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի մարտի 23-ի ««Հայաստանի Հանրապետության տարվա երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի իրականացման կանոնակարգը, հայտադիմումի օրինակելի ձևը, հայտադիմումին կից անհրաժեշտ

փաստաթղթերի ցանկը, ծրագրի ձևաչափը, փորձագիտական գնահատման չափանիշները հաստատելու և Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 2019 թվականի մայիսի 27-ի № 92-Ա/1 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» № 459-Ա/2 հրամանը:

8/8/2023

X

ԱՐԹՈՒՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: MARTIROSYAN ARTUR 4110790255 **Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

(պարտականությունները կատարող)

Հավելված № 1
Հայաստանի Հանրապետության կրթության,
գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2023 թվականի _____ _____-ի
№ _____ հրամանի

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐՎԱ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ» ՄՐՑՈՒՅԹԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգով սահմանվում են «Հայաստանի Հանրապետության տարվա երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի (այսուհետ՝ Մրցույթ) անցկացման կարգը, պայմանները և անցկացման հետ կապված իրավահարաբերությունները:

2. Մրցույթի նպատակներն են՝

1) աջակցել մարզային երիտասարդական կյանքի ակտիվացմանը, երիտասարդների կարողությունների բացահայտմանը և համակողմանի զարգացմանը, որպես Հայաստանի Հանրապետության ակտիվ և պատասխանատու քաղաքացիների ինքնադրսևորմանն ու կայացմանը.

2) խթանել տեղական ինքնակառավարման մարմինների (այսուհետ՝ ՏԻՄ) կողմից երիտասարդական քաղաքականության ոլորտում իրականացվող աշխատանքների և ծրագրերի ծավալների մեծացումը.

3) նպաստել համայնքային երիտասարդական ենթակառուցվածքների ստեղծմանը և զարգացմանը (համայնքային երիտասարդական կենտրոններ (միջավայրեր), քաղաքացիական հասարակության կառույցներ (այսուհետ՝ ՔՀԿ) և այլն).

4) նպաստել միջհամայնքային երիտասարդական կենտրոնների (միջավայրերի) ցանցի ստեղծմանն ու համագործակցության զարգացմանը.

5) խրախուսել տեղական երիտասարդական աշխատանքի ձևավորումն ու զարգացումը, երիտասարդական նորարարական գաղափարների կյանքի կոչումը, օժանդակել միջազգային համագործակցության հաստատմանն ու զարգացմանը:

3. Մրցույթը կազմակերպում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն):

II. ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

4. Մրցույթին կարող են մասնակցել այն համայնքները, որոնց կազմում ներառված են քաղաքային բնակավայրեր, ընդ որում, Մրցույթին կարող է մասնակցել ինչպես տվյալ համայնքը, այնպես էլ՝ առանձին քաղաքային բնակավայրը (այսուհետ՝ Մասնակից):

5. Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանը չի մասնակցում Մրցույթին:

6. «Հայաստանի Հանրապետության տարվա երիտասարդական մայրաքաղաք» ճանաչված համայնքը կամ նրա կազմում ներառված առանձին քաղաքային բնակավայրը (այսուհետ՝ Մայրաքաղաք) չի կարող հայտ ներկայացնել և մասնակցել «Հայաստանի Հանրապետության տարվա երիտասարդական մայրաքաղաք» ճանաչվելուն հաջորդող տարի անցկացվող Մրցույթին (նույն համայնքը կամ նրա կազմում ներառված առանձին քաղաքային բնակավայրը չի կարող երկու անգամ անընդմեջ ճանաչվել «Հայաստանի Հանրապետության տարվա երիտասարդական մայրաքաղաք»):

7. Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված և Մայրաքաղաք հռչակված Մասնակիցը համարվում է երիտասարդական միջոցառումների և նախաձեռնությունների իրականացման հիմնական վայր: Մասնավորապես, Մայրաքաղաքում կարող են կազմակերպվել՝

1) Ամենամյա երիտասարդական ֆորումը.
2) Երիտասարդության միջազգային օրվան նվիրված միջոցառումները.
3) «Երիտասարդական աշխատողի վերապատրաստում» դասընթացը.
4) ԱՊՀ երիտասարդական խորհրդի նիստը.
5) այլ տեղական և միջազգային համաժողովներ, ֆորումներ, ֆլեշմոբեր, ճամբարներ, կլոր սեղան-քննարկումներ, բանավիճային ակումբներ, երիտասարդական ցուցահանդես-տոնավաճառներ՝ ուղղված երիտասարդական հիմնահարցերի բացահայտմանն ու լուծմանը:

8. Նախարարության և Մայրաքաղաքի միջև կնքվում է Համագործակցության հուշագիր, Մայրաքաղաքին տրվում է հավաստագիր, որով շնորհվում է «Հայաստանի Հանրապետության տարվա երիտասարդական մայրաքաղաք» տիտղոսը:

9. «Հայաստանի Հանրապետության տարվա երիտասարդական մայրաքաղաք» տիտղոս ստացած Մասնակցին է փոխանցվում խորհրդանշական բանալին մեկ տարի ժամկետով:

III. ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

10. Մրցույթը կազմակերպվում և անցկացվում է տարեկան մեկ անգամ՝ Նախարարության կողմից Մրցույթի հրապարակային հայտարարությամբ սահմանված ժամկետներում:

11. Մրցույթի հայտարարությունը հրապարակվում է Նախարարության պաշտոնական կայքէջում և erit.am երիտասարդական պորտալում, որն իր մեջ ներառում է տեղեկատվություն Մրցույթի մասնակցության պայմանների և ժամկետների վերաբերյալ:

12. Յուրաքանչյուր տարի Մրցույթի կազմակերպման և անցկացման աշխատանքների իրականացման համար ստեղծվում են մրցութային հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) և փորձագիտական գնահատման խումբ (այսուհետ՝ Խումբ):

13. Մրցույթն անց է կացվում, եթե դիմել է առնվազն մեկ Մասնակից:

14. Եթե հայտարարված ժամկետում սույն կանոնակարգով սահմանված պահանջներին և ձևաչափերին համապատասխան մրցութային հայտեր (այսուհետ՝ Հայտեր) չեն ներկայացվում կամ ներկայացված Հայտերը չեն համապատասխանում սույն կանոնակարգով սահմանված պահանջներին, ապա Մրցույթը համարվում է չկայացած (անվավեր), և հայտարարվում է նոր մրցույթ:

IV. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

15. Մրցույթն անցկացվում է հետևյալ փուլերով՝

1) Հայտի ընդունում և գնահատում Հանձնաժողովի կողմից՝ սահմանված պահանջներին համապատասխանելու կամ չհամապատասխանելու վերաբերյալ.

2) Հայտի փորձագիտական գնահատում Խմբի կողմից՝ փաստաթղթերի վերլուծության և տեղում ուսումնասիրությունների միջոցով.

3) ՀՀ բնակչության կողմից կարճ հաղորդագրությամբ SMS քվեարկություն.

4) Մրցույթի արդյունքների ամփոփում և հաջորդ տարվա Հայաստանի Հանրապետության տարվա երիտասարդական մայրաքաղաքի հռչակում:

16. Հայտը

1) Հայտը ներկայացվում է համայնքապետարանի կողմից համայնքում երիտասարդական ոլորտում գործունեություն ծավալող առնվազն երկու հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությամբ.

2) Հայտը պետք է բաղկացած լինի հետևյալ փաստաթղթերից՝

ա. Համայնքի ղեկավարի գրություն Մրցույթին մասնակցելու պատրաստակամության մասին.

բ. Համահայտատու կազմակերպությունների հանձնառությունը հավաստող գրություններ.

գ. «Հայաստանի Հանրապետության տարվա երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի հայտադիմում՝ համաձայն Ձև № 1-ի.

դ. «Հայաստանի Հանրապետության տարվա երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի հայտադիմումին կից անհրաժեշտ տեղեկատվության և փաստաթղթերի ցանկ՝ համաձայն Ձև № 2-ի.

ե. «Հայաստանի Հանրապետության տարվա երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի ծրագիր (այսուհետ՝ Ծրագիր)՝ համաձայն Ձև № 3-ի.

3) Ծրագիրը պետք է կազմված լինի հետևյալ բաժիններից՝

ա. Ծրագրի նկարագիրը.

բ. Ծրագրի նպատակը և խնդիրները.

գ. Ծրագրի ակնկալվող արդյունքները.

դ. Ծրագրի շարունակականության ապահովումը.

ե. Ծրագրի տեսանելիությունը և հաշվետվողականությունը.

զ. Ծրագրի իրականացման պլանը.

4) Ծրագիրը պետք է միտված լինի սույն կանոնակարգով սահմանված Մրցույթի նպատակներից մեկի կամ մի քանիսի իրագործմանը:

5) Հայտը կազմվում է մեկ օրինակից և ներկայացվում է Նախարարություն՝ համայնքի ղեկավարի գրությամբ էլեկտրոնային եղանակով:

17. Հայտերի ընդունումը

1) Հայտերը ներկայացվում են հայտարարությամբ սահմանված ժամկետներում:

2) Նախանշված ժամկետից ուշ ներկայացված Հայտերը չեն դիտարկվում:

3) Հանձնաժողովը հայտարարության մեջ նշված ժամկետի վերջին օրվան հաջորդող յոթ աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է ներկայացված Հայտերի համապատասխանությունը սույն կանոնակարգով սահմանված պահանջներին:

4) Հայտում հայտնաբերված՝ սույն կանոնակարգով սահմանված պահանջներին անհամապատասխանությունները շտկելու համար Հանձնաժողովը մեկ աշխատանքային օրվա ընթացքում Մասնակցի Հայտում նշված պաշտոնական էլեկտրոնային փոստին ուղարկում է համապատասխան ծանուցում հայտնաբերված անհամապատասխանություն-ները երեք աշխատանքային օրվա ընթացքում վերացնելու մասին:

5) Եթե սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չեն շտկվում, ապա Հայտը չի դիտարկվում:

6) Հայտը մերժելու մասին համապատասխան ծանուցումը մեկ աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստով ուղարկվում է Մասնակցի Հայտում նշված պաշտոնական էլեկտրոնային փոստին: Հայտը մերժելու մասին ծանուցումը պետք է պարունակի մերժման պատճառները:

7) Եթե ներկայացված Հայտը համապատասխանում է սույն կանոնակարգով սահմանված պահանջներին, ապա այն ներկայացվում է Խմբի ուսումնասիրմանը՝ փորձագիտական գնահատում իրականացնելու համար:

18. Հայտերի գնահատումը

1) Գնահատումն իրականացվում է Հավելված № 2-ով սահմանված երկու բաղադրիչների (համայնքի կարողությունների փորձագիտական գնահատում և Ծրագրի փորձագիտական գնահատում) և դրանց չափանիշների համաձայն:

2) Հանձնաժողովի կողմից Հայտերի ընդունմանը հաջորդող առավելագույնը երկու ամսվա ընթացքում (կախված ներկայացված Հայտերի քանակից) Խմբի կողմից իրականացվում է Հայտերի փորձագիտական գնահատում՝ փաստաթղթերի վերլուծության և տեղում ուսումնասիրությունների միջոցով:

3) Յուրաքանչյուր Հայտ գնահատվում է Խմբի յուրաքանչյուր անդամի կողմից:

4) Խմբի կողմից գնահատման ավարտից հետո ՀՀ բնակչության շրջանում անցկացվում է կարճ հաղորդագրությամբ SMS քվեարկություն՝ Մասնակիցների հայատառ անվանումները SMS հաղորդագրությամբ նախապես տրամադրված կարճ համարին ուղարկելու միջոցով:

5) SMS հաղորդագրությունների միջոցով հավաքված հասույթն ուղղվում է հաղթող Մասնակցի Ծրագրի իրականացմանը:

V. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

19. Մրցույթի արդյունքների ամփոփման նպատակով գումարված Հանձնաժողովի ամփոփիչ նիստին կարող են մասնակցել Խմբի փորձագետները և հայտատու համայնքների ներկայացուցիչները:

20. Խմբի փորձագետներն իրենց գնահատման արդյունքները բերում են փակ ծրարով:

21. Խմբի փորձագետի՝ ամփոփիչ նիստին մասնակցության անհնարինության դեպքում փակ ծրարը նախապես հանձնվում է Հանձնաժողովի քարտուղարին՝ առանձին

թերթի վրա կատարելով փորձագիտական արդյունքների ներկայացման լիազորության մասին նշագրում:

22. Հանձնաժողովն ամփոփում է Խմբի՝ համայնքի կարողությունների փորձագիտական գնահատման և Ծրագրի փորձագիտական գնահատման արդյունքները՝ համադրելով բոլոր փորձագետների գնահատման արդյունքները յուրաքանչյուր Մասնակցի համար:

23. Այնուհետև հրապարակվում են կարճ հաղորդագրությամբ SMS քվեարկության արդյունքները յուրաքանչյուր Մասնակցի համար:

24. Հանձնաժողովն ամփոփում է վերջնական արդյունքները՝ համադրելով Խմբի՝ համայնքի կարողությունների փորձագիտական գնահատման և Ծրագրի փորձագիտական գնահատման, ինչպես նաև կարճ հաղորդագրությամբ SMS քվեարկության արդյունքները՝ հաշվի առնելով բաղադրիչների հետևյալ տեսակարար կշիռները՝

1) կարճ հաղորդագրությամբ SMS քվեարկություն – տեսակարար կշիռը՝ 34%,

2) համայնքի կարողությունների փորձագիտական գնահատում – տեսակարար կշիռը՝ 33%,

3) Ծրագրի փորձագիտական գնահատում – տեսակարար կշիռը՝ 33%:

25. Յուրաքանչյուր Մասնակցի համար երեք բաղադրիչների հաշվառմամբ միավորների հաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևով՝

Մասնակից Ա = (SMS Ա/SMS)*SMS% + (ՀԿԳ Ա/ՀԿԳ)*ՀԿԳ%+ (ԾԳ Ա/ԾԳ)*ԾԳ%

որտեղ՝

SMS Ա-ն Ա քաղաքի/համայնքի ստացած sms-ների թիվն է,

SMS-ը բոլոր քաղաքների/համայնքների ստացած SMS-ների ընդհանուր գումարն է,

SMS%-ը կարճ հաղորդագրությամբ SMS քվեարկության տեսակարար կշիռն է,

ՀԿԳ Ա-ն Ա համայնքի կարողությունների փորձագիտական գնահատման միավորն է,

ՀԿԳ-ն բոլոր համայնքների կարողությունների փորձագիտական գնահատման միավորների ընդհանուր գումարն է,

ՀԿԳ%-ը համայնքի կարողությունների փորձագիտական գնահատման տեսակարար կշիռն է,

ԾԳ Ա-ն Ա քաղաքի/համայնքի Ծրագրի փորձագիտական գնահատման միավորն է,

ԾԳ-ն բոլոր քաղաքների/համայնքների Ծրագրերի փորձագիտական գնահատման միավորների ընդհանուր գումարն է,

ԾԳ%-ը Ծրագրի փորձագիտական գնահատման տեսակարար կշիռն է:

26. Յուրաքանչյուր Մասնակցի համար վերոնշյալ բանաձևով հաշվարկած վերջնական միավորը կլորացվում է մինչև հարյուրերորդական նիշը:

27. Մրցույթի հաղթող է ճանաչվում առավելագույն միավոր հավաքած Մասնակիցը:

28. Հավասար միավորների դեպքում Մրցույթի հաղթողը որոշվում է Հանձնաժողովի բաց քվեարկությամբ Հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

29. Հանձնաժողովը բաց քվեարկությամբ հաստատում է Մրցույթի արդյունքները:

30. Մրցույթի արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը տեղադրվում է Նախարարության պաշտոնական կայքէջում և erit.am հարթակում՝ Մրցույթի արդյունքների ամփոփումից հետո: Մրցույթի հաղթողը գրավոր կերպով 5 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացվում է Նախարարության կողմից:

31. Մրցույթի ընթացքում ծագած վիճելի հարցերը, որոնք չեն կարգավորվում սույն կանոնակարգով, լուծվում են Հանձնաժողովի նիստում՝ հիմնվելով արդարության, անկողմնակալության և ազնվության սկզբունքների վրա: Վեճի քննարկման արդյունքում Հանձնաժողովի կայացրած որոշումը ենթակա է բողոքարկման օրենքով սահմանված կարգով:

32. Մրցույթի ավարտից հետո Հանձնաժողովը բոլոր փաստաթղթերը հանձնում է պատասխանատու ստորաբաժանմանը՝ օրենքով սահմանված կարգով արխիվացնելու համար:

VI. ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ԵՎ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԽՈՒՄԲԸ

33. Մրցութային հանձնաժողովը

1) Մրցույթի կազմակերպման և անցկացման նպատակով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի (այսուհետ՝ Նախարար) հրամանով կազմավորվում է մրցութային հանձնաժողով՝ բաղկացած յոթ հոգուց, այդ թվում՝ երեք ներկայացուցիչ Նախարարությունից, մեկ ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից, մեկ ներկայացուցիչ՝ ՔՀԿ-ներից, մեկ ներկայացուցիչ՝ Նախարարին կից հասարակական խորհրդից, մեկ ներկայացուցիչ՝ զարգացման գործընկերներից:

2) Հանձնաժողովի նախագահ է հանդիսանում երիտասարդական ոլորտը համակարգող նախարարի տեղակալը, քարտուղար՝ պատասխանատու ստորաբաժանման աշխատակիցը՝ պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի առաջարկությամբ:

3) Հանձնաժողովը կազմավորվում է Մրցույթի հայտարարության հրապարակումից առնվազն 5 աշխատանքային օր առաջ:

4) Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով:

5) Հանձնաժողովն ապահովում է Մրցույթի բնականոն ընթացքը, հրապարակայնությունը և թափանցիկ կազմակերպումը, մասնավորապես՝

ա) սահմանում է Մրցույթին մասնակցելու համար Մասնակիցների Հայտերի ընդունման ժամկետները՝ սույն կանոնակարգում ամրագրված դրույթներին համապատասխան.

բ) քննության է առնում Մրցույթին մասնակցելու համար Մասնակիցների փաստաթղթերի ամբողջականությունը և համապատասխանությունը կանոնակարգով սահմանված պահանջներին.

գ) պատասխանատու է Մրցույթի արդյունքների հրապարակման համար.

դ) սահմանում է Խմբի կազմում ընդգրկվելու ցանկություն ունեցող թեկնածուներին ներկայացվող պահանջները և փաստաթղթերի փաթեթը.

ե) ընտրում է Խմբի փորձագետներին իր կողմից սահմանված պահանջներին համապատասխան.

զ) կազմակերպում է հանդիպում-քննարկում Խմբի փորձագետների հետ՝ մանրամասն ներկայացնելով Մրցույթի նպատակներն ու փորձագետներից ակնկալվող արդյունքները.

է) իրականացնում է օրենքով և սույն կանոնակարգով իրեն վերապահված այլ լիազորություններ:

34. Փորձագիտական գնահատման խումբը

1) Փորձագիտական գնահատման խմբի կազմում կարող են ընդգրկվել Հանձնաժողովի կողմից սահմանված պահանջներին համապատասխան, երիտասարդական ոլորտում փորձառություն ունեցող տեղական, միջազգային կամ հասարակական կազմակերպություններից ներկայացուցիչներ:

2) Խմբի անհատական կազմը հաստատում է Նախարարը:

3) Խումբը բաղկացած է առավելագույնը հինգ փորձագետից:

4) Փորձագետը չի կարող լինել Հանձնաժողովի անդամ:

5) Խումբը, առաջնորդվելով սույն կանոնակարգով, իրականացնում է Հայտերի փորձագիտական գնահատում, որի համար կարող է մշակել և առաջարկել մեթոդաբանություն՝ յուրաքանչյուր չափանիշի մասով համայնքի կարողությունների և Ծրագրի գնահատման տվյալների ձեռքբերման համար (օրինակ՝ փաստաթղթերի վերլուծություն, դաշտային դիտարկում, էական դերակատարների հարցում, թիրախ-խմբային քննարկում և այլն): Մեթոդաբանությունը ենթակա է Հանձնաժողովի հաստատմանը:

6) Խմբի գործունեությունն իրականացվում է հայտատու համայնքներ այցելությամբ՝ տեղում ուսումնասիրության միջոցով, որի հիման վրա յուրաքանչյուր փորձագետ իրականացնում է անհատական փորձագիտական գնահատում: Գնահատման արդյունքները փակ ծրարներով հանձնվում են Նախարարությանը՝ ապահովելով փորձագետների գնահատականների գաղտնիությունը:

7) Եթե Մրցույթի ընթացքում Խմբի որևէ փորձագետի մասնակցությունը հետագա աշխատանքներին դառնում է անհնար, ապա Խմբի կազմը չի համալրվում:

35. Հանձնաժողովի և Խմբի գործունեությունը դադարում է Մրցույթի արդյունքների հրապարակումից անմիջապես հետո:

VII. ՄՐՑՈՒՅԹԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

36. Մրցույթի անցկացման հետ կապված ծախսերի ֆինանսավորումն իրականացվում է Նախարարության միջոցների հաշվին:

37. Սույն կանոնակարգը չի սահմանափակում Մայրաքաղաքի բյուջեից կամ այլ աղբյուրից Մրցույթի անցկացման համար հատկացվելիք համաֆինանսավորման հնարավորությունը և ծավալները:

ՁԵՎ № 1

ՀԱՅՏԱԴԻՄՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐՎԱ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ» ՄՐՑՈՒՅԹԻ

1. Քաղաքային համայնքի անունը/քաղաքի անունը՝

---

2. Համայնքի ղեկավար՝

---

3. Համայնքապետարանի կոնտակտային տվյալները՝

Հեռ.՝ քաղաքային	
Հեռ.՝ բջջային	
Հասցե	
Էլեկտրոնային փոստ	
Պաշտոնական կայքէջ	
Ֆեյսբուքյան էջ	

4. Համայնքապետարանի կողմից Մրցույթի պատասխանատու՝

Անուն, ազգանուն		
Պաշտոն		
Կոնտակտային տվյալներ	Հեռ.՝ քաղաքային	
	Հեռ.՝ բջջային	
	Էլեկտրոնային փոստ	

5. 1-ին համահայտատու հասարակական կազմակերպություն՝

Կազմակերպության անվանում	

Ղեկավարի անուն, ազգանուն		
Կոնտակտային տվյալներ	Հեռ.՝ քաղաքային	
	Հեռ.՝ բջջային	
	Հասցե	
	Էլեկտրոնային փոստ	
	Պաշտոնական կայքէջ	
	Ֆեյսբուքյան էջ	

6. 2-րդ համահայտատու հասարակական կազմակերպություն՝

Կազմակերպության անվանումը		
Ղեկավարի անուն, ազգանուն		
Կոնտակտային տվյալներ	Հեռ.՝ քաղաքային	
	Հեռ.՝ բջջային	
	Հասցե	
	Էլեկտրոնային փոստ	
	Պաշտոնական կայքէջ	
	Ֆեյսբուքյան էջ	

(ստորագրություն)	(համայնքի ղեկավարի անուն, հայրանուն, ազգանուն)
(ստորագրություն)	(Մրցույթի պատասխանատուի անուն, հայրանուն, ազգանուն)
(ստորագրություն)	(1-ին ՀԿ ղեկավարի անուն, հայրանուն, ազգանուն)
(ստորագրություն)	(2-րդ ՀԿ ղեկավարի անուն, հայրանուն, ազգանուն)

ՁԵՎ № 2

ՑԱՆԿ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐՎԱ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ» ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱԴԻՄՈՒՄԻՆ ԿԻՑ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

Ներքոնշյալ յուրաքանչյուր կետի վերաբերյալ ներկայացվող տեղեկատվությունը հնարավորության դեպքում պետք է ուղեկցվի փաստաթղթերով, թվային նկարներով, տեսանյութերով, ակտիվ հղումներով:

1. Տեղեկատվություն համայնքապետարանի կողմից իրականացված և իրականացվող երիտասարդական կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի վերաբերյալ

N	Սկիզբ - ավարտ (ամիս/տարի)	Ծրագրի անվանում	Ծրագրի չափելի արդյունքներ	Հատկացված բյուջե	Համաֆինանսավորում (եթե առկա է)
1.					
2.					
3.					
…					

2. Տեղեկատվություն համայնքում/քաղաքում գործող երիտասարդական կենտրոնների (միջավայրերի) և դրանց գործունեության վերաբերյալ

N	Կենտրոնի (միջավայրի) անվանում	Կոնտակտային անձի ԱԱՀ, հեռ., էլ. փոստ	Գործունեության մասին ամփոփ, հակիրճ նկարագրություն (կատարված և ընթացիկ ծրագրեր, միջոցառումներ, շահառու խմբեր, ՏԻՄ-ի հետ գործընկերություն, միջազգային կապեր, կայքէջ, սոցիալական ցանցերում գործող էջ)
1.			
2.			
3.			
…			

3. Տեղեկատվություն համայնքում/քաղաքում կրթական, մշակութային, մարզական, զբոսաշրջային և այլ երիտասարդական միջոցառումներ կազմակերպելու նպատակով առկա ռեսուրսային բազայի վերաբերյալ

N	Ռեսուրսի անվանում	Տեսակ (այգի, լիճ, դահլիճ (այդ թվում՝ ուս. հաստատության), տաղավար, սպորտ-սրահ, ուսումնական կենտրոն, գրադարան և այլն)	Շահագործող կառույց (անվանում, կոնտակտային տվյալներ)	Հարմարություններ և տեխնիկական պարամետրեր (օրինակ՝ նստատեղերի թիվ, առավելագույն այցելուների թիվ, սանհանգույց, լուսային, ձայնային հագեցվածություն)	Գնացուցակ (եթե ոչ համայնքային/ ոչ պետական է)
1.					
2.					
3.					
…					

4. Տեղեկատվություն համայնքի/քաղաքի հասարակական կյանքում երիտասարդական կազմակերպությունների ներգրավվածության և երիտասարդական նախաձեռնությունների վերաբերյալ

N	Միջոցառման/ նախաձեռնության անվանում, իրականացման ժամկետ (ամիս/տարի)	Տեսակ (սեմինար, ժողով, դասընթաց, ցուցահանդես, մրցույթ և այլն)	Իրականացրած կառույց	Բնույթ (ներհամայնքային, միջհամայնքային, մարզային, հանրապետական, համապետական, միջազգային)	Ծրագրի չափելի արդյունքներ
1.					
2.					
3.					
…					

5. Տեղեկատվություն վերջին 5 տարում համայնքային բյուջեից սուբսիդիաների, դրամաշնորհային ծրագրերի տեսքով երիտասարդական ծրագրերի ֆինանսական հատկացումների վերաբերյալ

N	Սկիզբ -ավարտ (ամիս/տարի)	Ծրագրի անվանում	Ծրագրի չափելի արդյունքներ	Հատկացված բյուջե	Համաֆինանսավորում (եթե առկա է)
1.					
2.					
3.					
…					

6. Տեղեկատվություն համայնքապետարանի աշխատակազմում երիտասարդների ներգրավվածության վերաբերյալ

Աշխատակազմ- հաստիքների ընդհանուր թիվ	Աշխատակազմում ընդգրկված երիտասարդ կադրերի թիվ*, %-ը ընդհանուրի մեջ	Ավագանու կազմում ընդգրկված երիտասարդների թիվ

**Հնարավորության դեպքում ներկայացնել աշխատակազմում տարիքային կազմի փոփոխության դինամիկան՝ ըստ տարիների:*

7. Տեղեկատվություն ներհամայնքային և մարզի միջհամայնքային տրանսպորտային հաղորդակցությունների վիճակի մասին

Ներհամայնքային ճանապարհներ	
Միջհամայնքային ճանապարհներ	
Ներհամայնքային երթուղային տրանսպորտ (այդ թվում՝ աշխատանքային ժամեր)	
Միջհամայնքային երթուղային տրանսպորտ (այդ թվում՝ աշխատանքային ժամեր)	

8. Տեղեկատվություն քաղաքի/համայնքի հյուրանոցային ցանցի վերաբերյալ

N	Անվանում	Տեսակ (հյուրանոց, հյուրատուն)	Գտնվելու վայր /հասցե	Միջոցառումների կազմակերպման համար անհրաժեշտ ռեսուրսներ, հարմարություններ (այդ թվում՝ քանի հյուրի համար է նախատեսված)	Սենյակ / մահճակալի քանակ
1.					
2.					
3.					
…					

(ստորագրություն) (համայնքի ղեկավարի անուն, հայրանուն, ազգանուն)

(ստորագրություն) (Մրցույթի պատասխանատուի անուն, հայրանուն, ազգանուն)

ՁԵՎ № 3

ԾՐԱԳԻՐ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐՎԱ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ» ՄՐՑՈՒՅԹԻ

1. Ծրագրի անվանումը

2. Ծրագրի նկարագրություն

< Ներկայացրեք Ծրագրի ամփոփ նկարագիրը: Նկարագրեք ներկա վիճակը և հիմնավորեք՝ ինչու է անհրաժեշտ Ծրագիրը, հնարավորության դեպքում թվային տվյալներ ներկայացրեք: Հստակ նկարագրեք Ծրագրում ներգրավված անձանց գործառույթները, համահայտատու կազմակերպությունների դերը, Ծրագրի շրջանակներում համագործակցող հիմնական գործընկերներին և նրանց մասնագիտական փորձառությունը՝ Ծրագրի նպատակներին հասնելու տեսանկյունից: Ներկայացրեք՝ ինչպես եք պատրաստվում ներգրավել երիտասարդներին Ծրագրի իրականացման գործում: Նկարագրեք՝ ինչպես եք Ծրագրում ապահովելու ներառականության սկզբունքը: >

3. Ծրագրի նպատակը և խնդիրները

< Համառոտ կերպով նկարագրեք՝ որն է Ծրագրի նպատակը և ինչ խնդիրներ են սահմանվում նպատակին հասնելու համար: >

4. Ծրագրի ակնկալվող արդյունքները

< Համառոտ կերպով նկարագրեք՝ ինչ արդյունքներ են ակնկալվում Ծրագրի ավարտին, հնարավորության դեպքում արդյունքներն արտահայտեք քանակական և որակական ցուցիչներով: Նկարագրեք՝ ինչպես եք ապահովելու Ծրագրի չափելիությունը և առավելագույն տեսանելիությունը: Հստակ ներկայացրեք՝ ինչ կտա Ծրագիրը համայնքի երիտասարդությանը, այդ թվում հաշմանդամություն ունեցող երիտասարդներին: >

5. Ծրագրի շարունակականության ապահովումը

< Ներկայացրեք՝ ինչպես / ինչ մեխանիզմներով եք պատրաստվում ապահովել Ծրագրի արդյունքների շարունակականությունը Ծրագրի ավարտից հետո: >

6. Ծրագրի տեսանելիությունը և հաշվետվողականությունը

< Ներկայացրեք՝ ինչ գործուն մեխանիզմներով եք պատրաստվում ապահովել Ծրագրի տեսանելիությունը և հաշվետվողականությունը, այդ թվում նաև՝ երիտասարդների ներգրավումը Ծրագրի մշտադիտարկման մեխանիզմների մշակման, տվյալների հավաքագրման և ամփոփման գործընթացներում: >

7. Ծրագրի իրականացման պլանը

<Ներկայացրեք Ծրագրի շրջանակներում նախատեսվող միջոցառումների ժամանակացույցը հնարավորինս մանրամասն:>

N	Գործողություն	Պատասխանատու*	Իրականացման ժամկետը (նշել ամիսները)							
			1	2	3	4	5	6	7	…
1										
2										
3										
4										
5										
…										

** Կցել Ծրագրում ներգրավված անձանց CV-ները, նրանց փորձառությունը հավաստող փաստաթղթերը, վկայականները, հավաստագրերը և այլն:*

(ստորագրություն)	(համայնքի ղեկավարի անուն, հայրանուն, ազգանուն)
(ստորագրություն)	(Մրցույթի պատասխանատուի անուն, հայրանուն, ազգանուն)
(ստորագրություն)	(1-ին ՀԿ ղեկավարի անուն, հայրանուն, ազգանուն)
(ստորագրություն)	(2-րդ ՀԿ ղեկավարի անուն, հայրանուն, ազգանուն)

Հավելված № 2
Հայաստանի Հանրապետության կրթության,
գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2023 թվականի _____ _____-ի
№ _____ հրամանի

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐՎԱ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ» ՄՐՑՈՒՅԹԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Հայտերի փորձագիտական գնահատումն իրականացվում է՝ ըստ երկու բաղադրիչների՝

I) համայնքի կարողությունների փորձագիտական գնահատում,

II) Ծրագրի փորձագիտական գնահատում:

I. Համայնքի կարողությունների փորձագիտական գնահատում

Համայնքի կարողությունները գնահատելիս հաշվի է առնվում, թե համայնքի հասարակական կյանքում և ՏԻՄ գործունեության շրջանակներում **երիտասարդների դրական զարգացման**[1] և ակտիվ ներգրավման համար ինչ ռեսուրսներ, մեխանիզմներ և հարաբերություններ են առկա համայնքում:

Չափանիշներ	1	2	3	4
Ա. Ենթակառուցվածքներ և ռեսուրսների հատկացում				
1. Առկա է և գործում է մեկ կամ ավելի երիտասարդական կենտրոն (միջավայր):[2]				
2. Երիտասարդների համար հետաքրքրական միջոցառումների կազմակերպման համար առկա են բարեկարգ, կանաչապատ և անվտանգ հանրային տարածքներ/տաղավարներ, որոնք մատչելի և հյուրընկալ են նաև այլ բնակավայրերի երիտասարդների համար:				
3. Առկա համայնքային ծառայությունները և տարաբնույթ ենթակառուցվածք-ներն ապահովում են երիտասարդների համար հասանելի և նրանց կարողությունների բացահայտմանը, զարգացմանը, ինտելեկտուալ ժամանցի կազմակերպմանը նպաստող միջավայր, որտեղ երիտասարդներն իրացնում են իրենց և փոխգործակցում են իրենց հուզող խնդիրների բացահայտման և լուծումների մշակման ուղղությամբ:				

[1] https://www.youthpower.org/positive-youth-development-pyd-framework

[2] Երիտասարդական կենտրոնը հանդիսանում է տվյալ համայնքի բնակավայրի, համայնքի, միջհամայնքային կլաստերի երիտասարդների ներուժի բացահայտման, կարողությունների շարունակական զարգացման, ինքնաիրացման, սոցիալականացման, ակտիվ քաղաքացիության դրսևորման, ինտելեկտուալ ժամանցի կազմակերպման, իրենց խնդիրների և մտահոգությունների հասցեագրման համար անհրաժեշտ միջավայր:

4. Վերջին հինգ տարում երիտասարդական ծրագրերի համար համայնքի բյուջեից եղել են շոշափելի հատկացումներ, որոնք աճի միտում ունեն:				
5. Երիտասարդների հետ աշխատանքի գործառույթը ներառված է ՏԻՄ-ի առնվազն 1 աշխատակցի պաշտոնի նկարագրում, որի կատարողականը գնահատելիս հաշվի է առնվում նաև շահառուների կարծիքը:				
Բ. Երիտասարդների ներգրավման մեխանիզմներ և նպաստող միջավայր				
1. Համայնքը երիտասարդությանը հնարավորություն է տալիս ծրագրեր և նախաձեռնություններ առաջարկել, մշակել և իրականացնել՝ միաժամանակ տալով երիտասարդությանը պատասխանատվություն ստանձնելու և ինքնավարություն ձեռք բերելու հնարավորություն:				
2. Առկա են գործող մեխանիզմներ, որոնք ապահովում են երիտասարդական կազմակերպությունների, ակտիվ նախաձեռնող խմբերի ներգրավումը և համատեղ ջանքերը ՏԻՄ-ի՝ համայնքի զարգացման գործողություններում և որոշումների կայացման գործընթացներում, այդ թվում՝ ուղղված համայնքի երիտասարդության տեսլականի ձևավորմանը և արտացոլմանը համայնքի զարգացման ծրագրում:				
3. Երիտասարդական ծրագրերի բովանդակությունը, իրականացման ձևերը, գործողությունների տեղն ու ժամանակը որոշվում են երիտասարդների հետ համատեղ՝ քննարկումներում ներառելով տարբեր սոցիալական և հետաքրքրության խմբերի ներկայացուցիչների, ինչպես նաև՝ հաշմանդամություն ունեցող երիտասարդների:				
4. Ծրագրերը / միջոցառումները կանոնակարգող փաստաթղթերը և ուղեցույցները մշակվում և փաստաթղթավորվում են երիտասարդների հետ համատեղ:				
Գ. Երիտասարդակենտրոն գործունեություն և ծրագրեր				
1. Համայնքը նախապես պլանավորում է այն միջոցառումների շրջանակը (օրինակ՝ շնորհանդես, ցուցահանդես, մրցանակաբաշխություն և այլն), որոնց ընթացքում խրախուսվելու, գնահատվելու են համայնքի երիտասարդների նվաճումները, ներդրումներն ու ձեռքբերումները:				
2. Համայնքում իրականացվող ծրագրերի արդյունքում երիտասարդները ձեռք են բերում կամ բարելավում են մասնագիտական զարգացման, զբաղունակության, առողջ ապրելակերպի, բարձրակարգ մտածողության, հույզերի ճանաչման, ինքնավերահսկման և միջանձնային հմտությունները՝ իրենց կյանքի վերաբերյալ նպատակներ սահմանելու և այդ նպատակներին հասնելու, ինքնուրույն որոշումներ կայացնելու և իրագործելու համար:				
3. Վերոնշյալ կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումները մշակված են ժամանակակից, հետաքրքրական լուծումներով և մեթոդներով՝ հիմնվելով երիտասարդության տարբեր, այդ թվում մարգինալացված հատվածների կարիքների վրա:				

4. Երիտասարդների հետ աշխատող պաշտոնյաները, սոցիալական և երիտասարդական աշխատողները վերապատրաստված են, դրսևորում են նույն որակի «փափուկ» հմտություններ և օրինակ են ծառայում իրենց վարքագծով ու գործելակերպով:				
5. Միջոցառումները խթանում են հասակակիցների փոխվստահությունը, առողջ փոխհարաբերությունները, ներառական մշակույթ և համայնքային պատկանելություն ձևավորող փորձի փոխանակումը:				
6. Համայնքային ծառայության կազմակերպությունների գործելաոճը խթանում է առողջ երիտասարդ-մեծահասակ փոխհարաբերություններ՝ ապահովելով վերապատրաստված, հոգատար և դրական վարքագծով աշխատակիցներ:				
Ի ԸՆԴԱՄԵՆԸ				

II. Ծրագրի փորձագիտական գնահատում

Չափանիշներ	1	2	3	4
Ա. Ծրագրի բովանդակային արժեք				
1. Ծրագիրը հստակ ձևակերպում է, թե ինչ ազդեցություն կունենա երիտասարդների կյանքի որակի վրա, մասնավորապես երիտասարդների դրական զարգացման առումով՝ առաջնորդվելով «Համայնքի կարողությունների գնահատման» շրջանակի Բ և Գ տիրույթների չափանիշներով:				
2. Ծրագրի նպատակի(ների) և խնդիրների միջև պատճառահետևանքային կապը հստակ է, ակնկալվող արդյունքները չափելի են, իրագործելի են պլանավորած ժամկետներում, իսկ դրանց ուղղված գործողություններն իրատեսական են առկա նյութական, մարդկային և մեթոդական ռեսուրսների շրջանակում:				
3. Ծրագիրը առաջարկում է հետծրագրային մեխանիզմներ և մոտեցումներ՝ խթանելու ծրագրի արդյունքների կենսունակությունը:				
Բ. Ծրագրի կառավարում				
1. Ծրագրի մասնակից դերակատարների գործառույթները հստակ սահմանազատված են, և նրանք ներդնում են բավարար նյութատեխնիկական և մարդկային ռեսուրսներ՝ համապատասխան մասնագիտական փորձառությամբ Ծրագրի գործողություններն իրականացնելու համար:				
2. Ծրագրի տեսանելիությունը և հաշվետվողականությունն ապահովելու համար առաջարկված են գործուն մեխանիզմներ՝ ապահովելով նաև երիտասարդների ներգրավումը ծրագրի մշտադիտարկման				

մեխանիզմների մշակման, տվյալների հավաքագրման և ամփոփման գործընթացներում:				
II ԸՆԴԱՄԵՆԸ				

ՎԵՐՋՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ՝

ԸՆԴԱՄԵՆԸ՝ I+II	

Փորձագետ՝ *…….. / …… /*
(անուն, հայրանուն, ազգանուն) *(ստորագրություն)*

«…….» ……. 20 …թ.